ՓՈՒՆՋ

Թիւ 1282 — ՇԱԲԱԹ — 1878 ՅՈՒՆԻՍ 3

ԱԶԳԱՅԻՆ

Դժբաղդաբար տակաւին գաւառներէն չզգացուեցան մեր ազգայնոյ գանգատանաց ձայները, և ազգային ուրիշ լրագրաց հետ մեք ևս յաճախ կհարկադրիմք գաւառներէն արուած տխուր լուրեր հրատարակել։ Աւասիկ այս կարգէն է Մարզուանէն մայիս 11թուով գրուած հետագայ նամակն ալ, որ անհաճոյ եղելութիւններ կդուժէ՝ յանձնարարելով մեզ որ Բ. Դրան և Պատրիարքարանի ուշադրութիւնը խնդրիմք։

«Բաւական ժամանակէ ի վեր է՝ որ գաւառիս շրջակայքը ամէն տեսակ ոճրագործութիւնք՝ ստէպ ստէպ ի գործ կդրուին, այնպէս որ՝ այդեղ գործք, պարտիզպանք և ադարակատերք չեն վըստահիր քաղաքէն դուրս ելնել և աշխատելու երթալ. անտանելի եղած են մեր ազգայնոյ վիշտերն ու հարուածները։ Ներկայ տարւոյս սկիզբները Թադիկեան Թադէոս քաջ երիտասարդն (որոյ անցք Փունջիդ 1253դ թերթով հրատարակուած է) հարս մը եկեղեցի տարուած ժամանակ, քանի մը ոճրագործք հարսը առևանգելու միջոցին, նոցա հետամուտ լինելով՝ մարտնչած ատեն դաշոյնի հարուած կրելով վիրաւորեցաւ, և հաղիւ տասնևհինգ օր կիսամեռ տպրեցաւ, այնուհետև կնքեց իւր կեանքն ի սուգ և ի թշուառութիւն իւր խեղճ և կարօտ ընտանեաց։

Այս եղելութենէն ամիս ու կիսի չափ ետքը, Սողոմոնեան Մկրտիչ գիւղը գացած ժամանակ վիրաւորեցին՝ քաղաքս տան վայրկեան հեռու Գիւմպէթ ըսուած տեղը. հաղիւ մէկ շաբաթ ապրեցաւ ողորմելին և կնքեց մահկանացուն։ Դեռ անցեալ օր, ապրիլ 8ին Ճախեան Պ. Գրիգոր քաջ երիտասարդն՝ վիրաւորուեցաւ չարագործէ մը, վեցապայթ ատրճանակի զնդակաւ. այս եղեռնագործութիւնը քաղաքիս մէջ բոլոր քաղքացոց ժողովարանին առջև տեղի ունեցաւ՝ բազմաթիւ մարդոց ներկայութեան. ոստիկանութիւնը բռնեց զայն, որոյ քովէն վեցապայթ ատրճանակը գտնուեցաւ, և վերջէն հանուած զնդակն նորա ծակին հետ բաղդատուելով հաստատուեցաւ՝ նոյն ոճրագործին ձեռքէն զարնուած լինելն. այսպիսի բազմաթիւ ականատեսներու վկայութեանց, և անկասկածելի ապացոյցի հակառակ, տակաւին ըստ օրինի պատժուած չէ եղեռնագործը, որով կը քաջալերուի ոճրագործութիւն։ Յետ այսորիկ՝ Սուճիեան Կարապետն, որ Զատկի տօնին երրորդ օրը կորսուեցաւ, չորեքշաբթի օրն բազմաթիւ մարդիկ դաշտը ելան զայն փնտռելու. բայց մինչև երեկոյ ի դերև աշխատեցան, և ահա հինգշաբթի առաւօտ քաղաքիս շրջականերէն դիակն գտնուեցաւ, զոր խեղդելով մահացուցեր էին. (ինչպէս Փոսդիկեան քաջահմուտ բժիշկն ալ վկայեց) ամէն մարդ կվկայէ այս անձին համեստութեան և ազգօգուտ անձ մի լինելուն, որոյ դառնավիշտ մահուան համար, Մարզուանու հայ ու բողոքական բոլոր ժողովուրդը աղի արտասուքով ողբոյ և սգոյ, երբ Ս. Աստուածածնայ եկեղեցւոյ բակը խեղդամահ դիակը դրուած էր։

«Զմռնամք յիշելու թէ՝ ապրիլ 19ին գիշերը ժամը 4ին քաղաքիս Բերդի Դուռ ըսուած հրապարակն, իմ բնակած տանս դիմաց Շահամիրեան Ստեփանին տանը պատուհանէն ներս, քանի մը ոճրագործ հրայան պարպեցին, որով յոյն կինն և որդիքն զահի հարեալ ուժգնագոյն անկան, բարեբաղդաբար անվնաս։ Ահա այսպէս ի կենաց և յապահովութենէ զուրկ վիճակի մէջ կգտնուին տեղւոյս թշուառ ազգայինք։

* * *

Փափաղեան Ստեփան էֆէնտի՝ որ անցեալ հինգշաբթի Պերլին ուղևորեցաւ, երկուշաբթի երեկոյեան դէմ հոն հասեր, և հեռագրեր է Ս. Պատրիարք Հօր՝ որոյ գիտութեամբ գացած է մեր ծանուցեալ խնդրոյն համար։ Արդէն Տ. Խրիմեան և Տ. Նար-Պէյեան Սրբազաններն ալ հասած են։

Մանչեսթրէն գրուած մասնաւոր նամակ մը իմացուած է, թէ տեղւոյն պատուարժան և ազգասէր ազգայինք Ս. Զատկի տօնին 200 լիրա ժամուց տուեր են Տ. Խրիմեան Սրբազանի, բայց նա չէ ընդուներ իւր անձին համար։

Գրած էինք երկու շաբաթ յառաջ, թէ Անդղիոյ խորհրդարանին մէջ նախարարութեան հարցում մը պիտի ըլլայ Հայկական խնդրոյն համար։ Տէյլի Նիւզ անգղիական լրագրին ալ կհաստատէր մեր այս գրածը՝ ծանուցանելով թէ յունիս 4ին երեկոյին լորտ Շաֆթէսպիւրի լորտերուն խորհրդարանին մէջ պիտի հարցունէ, թէ նախարարութիւնը կրնայ վստահութիւն տալ խորհրդարանին, որ տէրութեանց ժողովը Հայոց համար ալ նոյնը պիտի որոշէ, ի՛նչ որ որոշուիցաւ քիոյ հպատակ ուրիշ քրիստոնէից համար։ Յիշեալ ազնուամիտ Լորտն, կյաւելու Տէյլի Նիւզ, այս հարցման հետ Հայոց վրայ այլևայլ ծանօթութիւններ ալ պիտի հաղորդէ։

Եւրոպական լրագրոց մէջ յունիս 6 թուով հրատարակեալ հեռագրէ մը ուրախութեամբ կիմանամք, թէ յիշեալ ազնուամիտ Լորտը հարցումն ըրեր է նոյն օրը, և արտաքին գործոց նախարար Լորտ Սալիսբրիի պատասխաներ է, թէ «Համայն «տէրութիւնք կփափաքին, որ տէրու-«թեանց ժողովը Հայաստանի իրաւունքն «ալ պաշտպանէ, քանի որ Այսթէֆա-«նոսի դաշնագրին մէջ Հայք և Հայաս-«տան ալ յիշուած են, և թէ՝ Թագուհ-«ւոյն կառավարութիւնը իւր ձեռքէն «եկածը պիտի ընէ, որպէս զի Հայոց «փրաւունքն ալ չզլացուի»։

Լորտ Դարնարվօն լորտ Սալիսբրիի սոյն յայտարարութենէն դոհ ըլլալով՝ ըսեր է թէ ինքը չկարծէր որ Հայոցմէ աւելի նը-կատողութեան առնելու արժանի ժողովուրդ գտնուի։ Լորտ Կրանվիլ ալ գոհունակութիւն յայտներ է սոյն լորտերուն յայտարարութեան համար։

Տիգրանակերտէն գրուած է մայիս 13 թուով։

«Վիէննայի Մխիթարեան նախորդ Միաբաններէն և Եւրոպիոյ երևելի հնախոյզներէն Սիպիլեան Հ. Կղեմէս՝ որ հին Նինուէի հնութեանց քննութեան ու վերակացութեան պաշտօնով Բ. Դրան կողմանէ նոյն կողմերը ուղևորած էր, ճանբան հիւանդանալով, ապրիլ 28ին Տիգրանակերտ հասած ատենը ծանրանալով, և ինքն ալ ղգալով անբժշկելի ըլլալը, տեղւոյն Բարուչին կղերին մեծաւոր Բատրէ Տօնաթօն կանչեր, առ Պապն հպատակութեան գիր մը ստորագրեր, և հոգևորական բոլոր պարտքերը կատարելէն յետոյ վախճաներ է։ Ցուղարկաւորութիւնը մեծաշուք հանդիսիւ կատարուեցաւ։» — Թէրճէմանը-էֆքեար։

Հայր Կղեմէսի այս անակնկալ վախճանն ընդհանուր ազգին համար ցաւալի է արդարև։ Անձամբ զինքը ճանչնալու պատիւն ունեցած եմք։

Ի սրտէ կսիրէր իւր ազգը, և նորա օգտին, պատուոյն ու յառաջադիմութեան համար բանիւ և գործով ջանադիր էր։ Հայաստանի այլևայլ կողմերը ուղևորած, հնութիւններ հաւաքած, տեղեկագրած, և մեծ քաջալեր հանդիսացած է մեր ազգայնոց, սրտեռանդն և դրդիչ ատենախօսութեամբ։ Դալաթիոյ մատենադարանի և կաճառի կարևոր հաստատութեանց ալ մեծապէս նպաստած է։ Կմաղթեմք, որ հռոմէական ազգայնոց բոլոր կղերն Հայր Սիպիլեանի սիրտն ու ոգին ունենան, և խորութիւնն ի սպառ վերնալով՝ սէր և միութիւն հաստատուի ազգին մէջ, ի չինութիւն և ի յառաջադիմութիւն ընդհանուր ազգիս, որ առաւել քան զամենայն ազգս պէտք ունի սիրոյ և միութեան։

Օսմանեան երեսփոխանները Ղազանճեան մեծ. Կիրակոս էֆէնտի՝ որ առաջիկայ Երկուշաբթի օր իւր հայրենիքը երթնիկա գառնալու պատրաստուած էր, բարձր. մեծ Եպարքոսի հրամանաւ ստիպուեցաւ. ետ մնալ։ Կոյսերական կառավարութիւնը որոշեր է, որ շաբաթի 8էվրէթի անդամ Ասլի Շէֆիզ պէյի հետ Հայաստան երթայ, Փիւրատերուն վիճակն ու ընթացքը քննելու, դանոնք զբաղեցնելու և յուզմունքներ ծածկելու, և Հայոց համար պէտք եղած բարեկարգութիւնները տեղեկագրելու պաշտօնով։ Բ. Դուռը այս մասին յատուկ հրահանգ մը պատրաստած, և ապրիլեն նախաբարոյ ժողովէն անցած ու օգոստ. Սուլթանին վաւերացման ներկայացած է։ Կատարեալ է թէ ազատ ու անկախ գործելու արտօնութիւն տրուած է մեծ. քննչաց, և մէկ քանի անձինք ալ ընկեր պիտի տրուին։ Կարծեմք, շաբթաս մէջ կրնան ճանրայ ելնել։ Շէֆիզ պէյը ճանչցուցեր՝ նորա արդարասիրութիւնը կգովեն։ Ղազանճեան էֆէնտին արդէն համբաւեալ է իւր ազգասիրութեամբն ու անաչառութեամբը։ Կասպարի, թէ իրեն համար եղած հանձարը կգերազանցէ, խրդճիւ և որքի մասք աշխատելով ի շահ ազգին։

Ինչպէս կանխաւ ծանուցուած էր՝ ազգային Երեսփոխանական ժողովը երէկ բացուեցաւ, ամեն. Ս. Գատրիարք Հօր ատենախօսութեամբ։ Նորին բարձր սրբազնութիւնը գոհութիւն մատոյց Աստուծոյ, հրոյ և սրոյ բաղմաղէտ աւարց անցնելուն համար. շնորհակալ եղաւ իւր խորհրդական դեր. Տ. Խորէն Սրբազանի՝ ուղղութեամբ և փութով իրեն աջակից գտնուելուն համար. շնորհակալ եղաւ ազգային ժողովոյն, Կրօնական ու Քաղաքական ժողովոց և տեսուչ խորհրդոց ու հոգաբարձութեանց՝ այնպիսի գրժնեայ օրերու մէջ ալ անվհատ ու անձանձիր աշխատիլ ու գործելնուն համար. սիրոյ, միութեան ու եղբայրութեան խօսք ազգու յորդորներ ուղղեց առ ամենայն պաշտօնական մարմինս և առ ամենայն ազգն՝ ի բարեկարգութիւն, ի յառաջադիմութիւն և ի շինութիւն հայկական տան։

Յետոյ առ ժամեայ դիւանը նշանակուեցաւ, Երեսփոխանաց երիցագոյններէն Ղազարոսեան Քրիստոսատուր էֆէնտի՝ ատենապետ, և կրտսերներէն՝ Մելիքեան Մկրտիչ էֆ. ատենագրիր ընտրուելով։

Անմիջապէս կարդացուեցաւ եկեղեցական ու աշխարհական բաղմաթիւ երեսփոխանաց մէկ գիրը, որով կհարցանէին թէ, կարելի է որ Ս. Գատրիարք Հայրը հակիրճ տեղեկութիւն մը տայ ազգային Ժողովին՝ 1876 դեկտ. 10ին իրեն եղած այն յանձնարարութեան վրայ, որ էր ամենայն տնօրինութիւն ընել թէ՝ Բ. Դրան քով և թէ՝ ուր որ անկ ըլլայ։ Ս. Հայրը փութացաւ հետևեալ պատասխանը տալ։

«Ս. յս զգոնուն իմ պատասխանատուութիւնս շատ մեծ է. և այդ պատասխանատուութեան զգացումը զիս կը խօսեցնէ ու կը լռեցնէ միանգամայն։ Թող Ազգն ալ այս իմ միճակս հասկնայ ու ներողամիտ ըլլայ ինձի։

«Գիտեմ, Երեսփոխան էֆէնտիներ, այն զգացումը՝ որուն հոս թարգման կը կանգնիք, ընդհանուր Ազգին զգացումն է. ոչ ոք ինձի չափ գիտէ զայդ, զի ամեն օր ամեն կողմէ հրաւէր ու պաղատանք կընդունիմ, մանաւանդ մեր երեք միլիոնէն աւելի հայերէն որ հայրենի հողին վրայ ազգային գոյութիւնը պահեցին մինչև այսօր։ Եւ այդքան աղերսանաց, ակնկալութեանց ու երկիւղի ես պատասխան մը պարտաւոր եմ այսօր. այս պատասխանս է ձեզի՝ և ի ձեզ բոլոր Ազգին, Սպասել յուսով։

«Հայոց խնդիրը իր արժանաւոր կերպովը ներկայացած է թէ՝ Բ. Դրան և թէ եւրոպական տէրութեանց։ Բ. Դուռն իր պաշտպանութիւնը խոստացաւ, եւրոպական տէրութիւնք ամենքն ալ իրենց համակրութիւնը յայտնեցին ու ամենքն ալ խօսք առած եմ որ դեսպանաժողովին մէջ նկատողութեան պիտի առնուի մեր Ազգին վիճակն ալ։ Հասարակաց կարծիքն ալ այսօր Եւրոպայի մէջ ա՛չ ևս անտարբեր է մեզի համար։

Ա. յոթնեգանօսի գաշնադրութեան մէջ մանաւոր յօդուած մը կայ արդէն Հայոց վերաբերեալ. ամենքնիդ գիտէք այդ յօդուածը։ Առաջին անգամ է որ գաշնադրութեան մը մէջ Հայոց ու Հայաստանի խօսքը կըլլայ։ Տարակոյս չունիմ որ եւրոպական մեծ գաշնադրութեան մէջ որ պիտի կնքուի ի Պերլին, անյիշատակ չ'պիտի մնայ մեր Ազգը։

Այլ ի՞նչ պիտի ըլլայ այն կարգադրութիւնը որ պիտի որոշուի մեզի համար, դայս չ'գիտեմ և ոչ թերևս գիտեն տակաւին այն քաղաքագէտք որ զայդ դաշնադրութիւնը պիտի խմբագրեն։

Իմ բոլոր ջանքս այն է որ այնպիսի կարգադրութիւն մ'ըլլայ, որ Ազգին կեանքը դիպուածոյ չ'մատնուի։

«Մինչև կողմէն ա՛չ ոք կրնայ ուրանալ Հայ ազգին իրեն վիճակակից ազգաց համար ըլլալիք կարգադրութեանց մասնակցելու իրաւունքը կը փութամ յաւելցնել որ ամենէն առաջ Բ. Դուռը վիպասած է ու կրվկայէ մեր այս իրաւունքին։

«Վերջապէս, Երեսփոխան էֆէնտիներ, ձեռքս խղճիս վրայ դնելով կը յայտարարեմ Ազգիս թէ ինչ որ կարելի էր աշխատիլ խօսիլ, գրել, ամենը ըրինք. մեր պարտքն էր մոռնալ մեր անձը՝ ու ազգը միայն մտածել. մոռցանք մեր անձը ու ազգը միայն մտածեցինք. ո՛չ թէ միայն ես, զի իմ է բոլոր պատասխանատուութիւն այլ ոչ բոլոր արդիւնքը, զի առաջին օրէն սկսայ գործակցութեամբ իմ սրբազան եղբարցս, բոլոր եպիսկոպոսական դասուն որ ի Պոլիս։ Այսօր իսկ երկու եպիսկոպոսունք մեր եկեղեցւոյն ու ազգին երկուքին պարծանքները, յետ իւրաքանչիւրն եւրոպական զանազան տէրութեանց քով պաշտպանելու ազգին գործը, միացած են ի Պերլին միասեան աշխատելու համար դեսպանաժողովին քով։

«Աստուած մեր ու անոնց ջանքերը պսակէ, Սպասենք յուսով։»

Նորին Սրբազնութեան այս պատասխանին վրայ մեծապէս գոհ ըլլալով համայն երեսփոխանք, եւան կանգնեցան խորին շնորհակալութիւններ մատուցին, և իւրաքանչիւր մի առ մի գոյին համբուրեցին Ս. Հօր աջը։ Միանգամայն վերահաստատեցին 1876 դեկտ. 10ի նատին մէջ մեր ազգին իրաւանց պաշտպանութեան համար Ս. Գատրիարք Հօր տրուած արտօնութիւնը, որպէս զի իւր ջանքն անխոտան յառաջ մղէ, ամեն ուր որ հարկ լինի։

Նաև՝ յայտարարեց ժողովը թէ որովհետև ամենակատարեալ վստահութիւն ունի Ս. Գատրիարք Հօր վրայ, հետևաբար նոյն վստահութիւնը կունենայ իրմէ ընտրեալ և խառն ժողովէն ընկալեալ գեր. խորհրդական Հօր վրայ ալ։

Սապա մայր դիւանին ընտրութիւնն եղաւ։

Ստեփան փաշա Սալանեան՝ Ա. ատենագ.
Տիգրան էֆն. Եուսուֆեան՝ Բ. »
Յովհաննէս էֆն. Նուրեան՝ Գ. »
Հ. Ս. Ալաճաճեան՝ Ա. ատենադպ.
Մկրտիչ էֆն. Մելիքեան՝ Բ. »
Աստվամ էֆն. Տէրոյենց՝ Գ. »

Ատեանը դադրուեցաւ՝ 8 օրէն նիստ ընելու, դիւաններն ընտրելու, և Քաղ. ու Կրօն. ժողովոց հրաժարագրերն և ուրիշ գրերն կարդալու որոշմամբ։

Ահաւասիկ, Անգղիոյ խորհրդարանին մէջ մեր ազգին վրայ եղած հարցման համար ըլլա Սալիշպըրիի ամբողջ պատասխանը։

«Կարծեմ թէ Հայ ազգ յիշուած են Ա. յոթնեգանոսի դաշնադրին մէկ յօդուածին մէջ։ Բ. Դուռը նոյն յօդուածով դաշնադրած է՝ Հայերը քիւրտերուն հարստահարութիւններէն պահպանել։ Զեմ յիշեր, որ Օսմանեան հպատակ ուրիշ քրիստոնեայք դաշնադրին մէջ մասնաւորապէս յիշատակուած ըլլան. միայն թէ՝ քրիստոնեայ բնակիչ ունեցող գաւառաց համար բարեկարգութիւն խոստացուած է։ Եւ այս՝ նկատողութեան արժանի տարբերութիւն մ'է. որովհետև՝ գաւառի մը բնակիչք եթէ ամբողջապէս կամ մեծագոյն մասամբ քրիստոնեայ ըլլան, յատուկ կանոնադրութիւն տալ հնար է. բայց եթէ ուրիշ կրօնքներէ բաղում ժողովուրդ խառն ըլլայ՝ ասանց յատուկ կանոնադրութիւն տալ հնար չըլլար, և եթէ տրուի՝ մէկ տեղ մը բնակեալ խառն ժողովրդոց համար այլեւայլ կարգադրութիւն ընել հարկ կըլլայ, եւ այս՝ անպատեհ է։ Ահաւասիկ տարակոյս չկայ թէ ի սկզբան Հայաստանի խնդրոյն՝ մեր պատահելիք մեծ դժուարութիւնն այս է։ Դիցուք, թէ Հայ ք կարենան անկախ կրօնք մը եւ զատ ազգութիւն մը կազմել։ բայց ասոնք այնչափ ցրուած ու տաճկաց հետ այնչափ խառնուած են, որ կամ տաճկաց՝ Հայոց ու քիւրտերու համար համահաւասար բարեկարգութիւն ընելու է, եւ կամ, ինչպէս ըսի, գաւառի մը այլեւայլ ժողովրդոց այլ եւայլ կանոնադրութիւններ տալու պէս անպատեհ միջոցն ի գործ դնելու։ Յայտարարելով դայս՝ կուզեմ ըսել թէ Հայոց խնդիրը Օսմանեան հպատակ ուրիշ քրիստոնէից խնդրոյն չնմանիր։ Գալով բարեկամս հարցման, սաչափ կըրնամ ըսել թէ չեմ կրնար ծանուցանել տէրութեանց ժողովին ընելիքը։ բայց տարակոյս չկայ թէ Հայաստանի խնդիրն ալ դաշնադրին յիշեալ յօդուածովն ժողովին խորհրդածութեան պիտի դայ։ Հաստատ է, որ Եւրոպոյ տէրութիւնք պիտի քննեն Հայաստանի խնդիրը՝ բուական

համակրանօք եւ Հայաստանի վիճակը բարեկարգելու բաղձանօք։ Կապահովցունեմ իմ բարեկամս, որ Թագուհւոյն կատարութիւնը համակրանօք ու արդարասիրութեամբ պիտի վարուի։

ԱԶԳ Գ.

18րդ տարեդարձի Ազգ. Սահմանադրութեան

Ազգային սահմանադրութեան 18րդ տարեդարձի մասնաժողովոյ վերջին յայտարարութեան համաձայն յառաջիկայ յունիս 4 կիրակի օր կատարուելիք հանդէսին համար սոյն երրորդ ազգարարութեամբ մասնաժողովը որոշեց ծանուցանել մեծարգոյ հասարակութեան, թէ՝

1° Երկրորդ ազգարարութեամբ՝ հանդիսավայրը մտնելու համար արք և տիկնայք թէ և 3 զուրուշ ողջ թղթադրամ պիտի վճարեն հրատարակուած էր, սակայն այժմ յիշեալ մուտքն 2 զուրուշ ողջ թղթադրամի վերածուած է։

2° Երթեւեկութեան համար թրամվայն իւր սովորական շրջանը կատարած ատեն, աւելի թուով կառք պատրաստ պիտի ունենայ։

3° Երկաթուղւոյ առաւօտեան և երեկոյեան երթեւեկութեան ժամերն հետեւեալներն են, որ յատկապէս առնուած են երկաթուղւոյ վարչութենէն.

ԺԱՄԱՑՈՅՑ

ՐՈՒՄԷԼԻԻ ԵՐԿԱԹՈՒՂԻՈՅ ԿԱՌԱԽՄԲԻՑ

Առաւօտուն Սիրքէճիէն Եէսիղուլէ

Սլաթուրքա ժամ բոպէ

11	40	Սիրք. Քում. Եէսիղուլէ
1	54	„ „ Եէնիգարա Սամաթիա, Եէսիղուլէ.
4	20	Սիրք. Քում. Եէնիգարա Սամաթիա, Եէսիղուլէ.

Երեկոյ Եէսիղուլէէն Սիրքէճի

Սլաթուրքա ժամ բոպէ

7	54	Եէսիղ. Սամ. Եէնիք. Քումքապու, Սիրքէճի.
9	41	Եէսիղ. Սամ. Եէնիք. Քումքապու, Սիրքէճի.
11	14	Եէսիղ. Քումք. Սիրքէճի.

78 Մաշիս 51 Գործ. Ազգ. Հիւ.
Փրաս. Հիւանդ. ՍԱՐԳԻՍ Մ. ՀԻՍԱՐԼԵԱՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ելմտից պաշտօնատունը կայսերական հրամանաւ հեռագրեր է պատառները, որ 94 ի հաշուոյն համար յանձնուելիք տասանորդի հասոյթին փոխուելէն անպատճառ ոսկի առնուի բուն դնովն և մէճիտ կամ թղթադրամ տալ ուզողներէն՝ վճարման ժամանակն ունեցած տարբերութեամբը առնուի. և այժմէն նշանակուի այս՝ աճուրդի տոմսերուն մէջ ու այնպէս աճուրդ ըլլայ, և պայմանագրոց (թահիւտ սէնէտաթը) մէջ այսպէս նշանակուի։

Պաշտօնատունը խոստացած է նամակաւ հաղորդել մանրամասնութիւնը։

— Տէրութեանց ժողովին ներկայացուցնելու համար օսմանեան պատգամաւորաց հետ Բ. Դրնէն երկու դիր ղրկուած ըլլալը կատուգուի։ Առաջինը՝ ինչպէս յառաջագոյն գրած էինք՝ Այսթէֆանոսի դաշնագրին աճապարանօք սպառնալեօք և զանազան դարձուածովք ստորագրուած ըլլալը կծանուցանէ։ Իսկ երկրորդը Թուրքիոյ համար նոր բարեկարգութեանց ծրագիր մ՝է, Թուրքիոյ երկրին ամբողջութեան ու անկախութեան հիմանց վրայ։ Բ. Դուռը գլխաւորաբար կծրագրէ որ, Թուրքիոյ մէջ ընդունուին Դաղղիոյ վարչական ու պատժական կանոնադրութիւնք, Պօլսոյ մէջ օսմանեան հպատակ մահմետականներէ և ոչ-մահմետականներէ և եւրոպացիներէ մեծ ժողով մը հաստատուի՝ բարեկարգութեանց գործադրութեան վերակացութեան համար, որոց բաշխման ու հաւաքման գործը՝ գաւառային վարչական ժողովոց յանձնուին, քրիստոնէից մեծամասնութիւն ունեցած տեղերը քրիստոնեայ կուսակալ դրուի, և Թուրքերէն լեզուէն զատ՝ իրրև պաշտօնական գործածութիւն նաև այն լեզուները իրենց տեղերը, որոնց ընակչաց շատը նոյն լեզուաւ կը խօսին։

— Օգոստ. Սուլթանը բարեհաճեր է մեծարանաց գիր մ՝ուղղել առ բարձ. մեծ Եպարքոս Սաֆվէթ փաշա, որ հանդիսաւոր կարգացուեցաւ չորեքշաբթի յաւանի նախարարաց ժողովոյ։ Ահաւասիկ հայ թարգմանութիւնը։

«Իմ մեծաշուք վեզիրս։ — Ինչպէս իմ փառաւորեալ Հօրս, յարդամեծար հօրեղբօրս և եղբօրս ժամանակ այլեւայլ պաշտօններու մէջ պարտաւորութիւններդ հաւատարմաբար ու անկեղծութեամբ կատարելուդ համար ամենուն համակրութեան ու վստահութեան արժանացած էք, նոյնպէս իմ գահակալութենէս հետէ առ իս ցուցած հաւատարմութիւնդ, սէրդ և կատարեալ վստահութիւնդ, Ձեր վրայ ունեցած հաւատարմութիւնս ու համբաւս առաւել հաստատեց ու զօրացուց։ Ինչպէս գիտէք, միակ բաղձանքս է՝ մեր երկրին ու պետութեան բարեբաստութիւնն ու փրկութիւնը. և այս՝ պետութեան հոգին եղող մեր գանձային վարկին բարւոքմամբ, մեր երկրին բնական ճոխութիւնն եղող երկրագործութեան յառաջացմամբ, և ուսմանց ու գիտութեանց լուսոյն մեր երկրին ամէն կողմերը ընդհանրացմամբ կողլայ։ Ուստի ձեր յանձնակատարութիւնն ու արժանաւորութիւնն կսպասեմ այս երեք խնդրոց կարգադրութիւնն ու արդիւնաւորութիւնը, ըստ կայսերական բաղձանացս։ Առ իս հաւատարմաբար, սիրով ու անկեղծութեամբ վարած պաշտամանցդ համար, և ամէն ընթացքդ ու շարժմունքդ յանձնելս գոհ ըլլալով Ձեր վրայ ունեցած կայսերական կատարեալ վստահութեանս ու համարմանս նոր նշան մը տալու դիտմամբ, կայսերական սոյն մեծարանաց գիրս (իրիֆամնամէ) առ ձեզ կուղղեմ իրրև յատուկ յիշատակ մը։»

— Ծերակուտականներէն Ալի Բիզա պէյ հինգշաբթի Գանտիա ուղևորեցաւ, այն կողմերը ղրկուած դաղթականները դեռեղելու, տեղի ունեցած անկարգութիւնները քննելու ու հերինակները ըստ օրինի պատժելու, և անկարգութեան չկրկնուելուն համար պէտք եղած միջոցներն ի գործ դնելու պաշտօնով։

— Պուլղարաց, Էքզարքը Փիլիպէ ուղևորեցաւ, իւր պաշտօնատունը հոն հաստատելու համար։

Բեդրսպուրկի ռուս Սինոդէն եկեղեցական մը ղրկուեր է իրրև օգնական Էքզարքին, և 20 հազար լիրա՝ եկեղեցական պիտոյից համար։

— Անդղիական 13 միլիոն լիրայի ժառանգութեան մը խնդրոյն վերջացած ըլլալուն լուրը՝ ղոր չորեքշաբթի ուրիշ լրագրաց հետ մեք ալ հրատարակեցինք, չստուգուեցաւ։ Իմացանք որ արդարև այսպիսի ժառանգական դատ մը բացուած է, բայց դեռ կշարունակէ, և գումարն ալ տակաւին յայտնի չէ։

— Ռուսական դեսպանատունը Ճէնեւրի յոյն վարժարանին դատաւորներէն Արիսթոքլէս էֆէնտիի յանձնարարեր է, 20 երիտասարդ գտնել Ռուսիոյ մէջ յոյն լեզուն ուսուցանելու, և տաճկագէտ յոյն մ՝ալ՝ Թուրքերէն լեզուին համար։

— Խարիճիյէ Փեամիպի անուանեցաւ Սպրօ Սահակ էֆէնտի, փոխանակ Յովհաննէս էֆէնտիի՝ որ Շուրայի-Տեվլէթի անդամոց կարգն անցաւ։

— Նիշի նախորդ կառավարիչ Ալի Բիզա փաշա Իւսկիւտարի կառավարիչ կարգեցաւ։

— Երբեմն էյուպի գայմագամ Ահմէտ պէյի յանձնուեցաւ՝ Պօլսոյ ոստիկանաց վերատեսչութիւնը։

— Նախորդ գլխաւոր նախարար Սատըդ փաշա Ճէզայիր Պահրը Սէֆիտի կուսակալ անուանեցաւ, և չորեքշաբթի օգոստ. Սուլթանին ներկայանալէն յետոյ ուղևորեցաւ ի Ճէյմէ, ուր ժամանակ մը պիտի մնայ օդափոխութեան և դարմանի համար։

— Բէյրթի մէջ Բլէզնայի վերջին պատերազմական նշանաւոր անցից թատերախաղը ներկայացուեր, և թատրոնը լցուած ու շատերը դուրս մնացած ըլլալով՝ երկրորդ անգամ ներկայացունել որոշուեր է։

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐ

Գերլին. 12 յունիս։ Կայսեր վիճակը շարունակ կը բարւոքի։ Անկողնէն ելաւ։ Ցերութեանց բոլոր ներկայացուցիչք հասան. խորհրդարանի մէջ իւրաքանչիւրն իրենց երկրին սկզբնատարին կարդաւ պիտի ունենան ըստ գաղղիական այբբենի(*)։ Ամենքն ալ ի դիմաց Պիզմարգ իշխանին, արտաքին գործոց պաշտօնակալաց կողմանէ ընդունուեցան։ Ժողովը գաղտնի պիտի պահէ վիճաբանութիւնը։ Բրօվենսալ Գորէսպոնտէնց և Նորտտէյչ Ալկեմայնէ Ցայթունկ լրագիրք՝ շնորհաւորելով ներկայացուցչաց դալուստը՝ կ՝ըսան թէ, տերութեանց ժողովը պիտի յաջողի և խաղաղութիւնը վերահաստատուի։ Գահաժառանգ իշխանը ամէն մէկին ուրոյն ուրոյն ընդունեց։ Կայսերական հրամանաւ՝ ազգային ժողովոյ նոր ընտրութիւնք յուլիս 30ին պիտի կատարուին։

Վիէննա. 12 յունիս. (Երեկոյ)։ Կէս-պաշտօնական լրագիրք՝ զօրաժողովի վերաբերեալ հրատարակութեանց չափազանցութիւնը ծանուցանելով հանդերձ՝ կգրեն թէ, հրաման եղած է սահմանադրոց վրայ զգուշութեան միջոցներ ձեռք առնուլ, և այս մասին կանխաւ ծանօթութիւն տրուած է հարուէկրի յանձնաժողովոյ։

Փարիզ. 12 Յունիս։ Երեսփոխանական ժողովին ու ծերակուտին դադար առին մինչև հոկտ. 28։

Պրիւսէլ. 12 յունիս։ Նոր ընտրութեանց շատը ընդդիմադիր մասին նպաստաւոր ըլլալուն պատճառաւ, նախարարք հրաժարեցան։

(*) Այսպէս պիտի նային. Գերմանիա, Աւստրիա, Գաղղիա, Անգղիա, Իտալիա, Ռուսիա, Թուրքիա։ 1109ին (տեկ.) երբ Դարբանդի հաշտութեան ժամանակ ի ժողով պիտի գումարէին Թուրքիոյ վրայ պատերազմի ելնող Գերմանիա (Աւստրիա), Ռուսիա և Վենետիկ, մէջերնին առաջնութեան խնդիր ելնելով՝ նոյն ժամանակի մեծ եպարքոս Ամուճա-գատէ Հիւսէյին փաշա հեռեւեալ միջոցն ի գործ դրեր է։ Ժողովին համար յատկապէս կանգնեալ վրանին՝ ըստ թուոյ ներկայացուցչաց՝ դրներ բանալ տուեր է. ամենքն՝ ալ միևնոյն ժամանակի մէջ մէկ մէկ դրնէ մտնելով դրան քովերը իրենց յատուկ թիկնաթոռներուն վրայ նստեր, և վրանին ամէն կողմը դուռ ըլլալով՝ առաջնութեան խնդրոյ տեղի չէ մնացեր։

ԻԼԱՆ

ՊԱՊԸ ՍԷՐԱՍՔԷՐԻ

Լսմանը եւ ղլուք գայիմէ եւ ղ ղուրուշա օլարագ՝
Միյաալը ի զէնկի՝ չիֆթ պիր՝ ղուրուշ իքի.
Օսմանլը կէմի չիֆթ պիր՝ ղրշ. իքի.
Թէֆիէլիք զէնճիրի՝ ատէտ պիր. փարա եւ ղ ԸՐԴ.
Գալիթագ թիմուրլանմասը՝ ատէտ պիր՝ ղուրուշ ալթմըշ.
Թիմուր թօպ՝

Սաթ	ատէտ	
18	1	պիրինճի պոյ
17	1	իքինճի »
16	1	իւչինճի »
13	1	տէօրտինճի »
11	1	պէշինճի »
10	1	ալթընճը »
2	1	եէտինճի »
7	1	քէօփրիսիզ սապրը

Էսմանը սիքքէի խալիսէ օլարագ՝
Ֆասա վէր թէրմէնին պաշը թարանմըշ քէնտիրենին իւգիւնտէն եէրլի իմալը՝
Հալաթ՝ ղբյէ պիր՝ ղուրուշ օն իքի.
Մանավրաֆօրա իփի՝ ատէտ պիր՝ փարա եւ ղ օն.
Գալբն եէրլի իփի՝ ղբյէ պիր ղրշ. օն.
Բէթէն իփլիյի՝ ղբյէ պիր՝ ղուրուշ ղբրդ պէշ.
Ինճէ վէ գալբն հումաթ իփլիյի՝ ղբյէ պիր՝ ղուրուշ օն պէշ:
Ֆօնիա իփի՝ ղբյէ պիր՝ ղուրուշ օն պէշ
Պիր ահնէ զարֆընտա հէր նէ մըդտարլէրի լուղում կէօրիւնիւրսէ՝ ալընմագ իւզրէ, պալատէ մուրադգամ օն սէգիզ գալէմ էշնա ֆիյաթը մուրադգամաք իլէ թալիպի էօհանէսինտէ օլուպ՝ իշպու չէհրը հաղիրանը լուսինին իւչիւնճի ճիւմաա իրթէսի կիւնիւ գարարը գաթիսի վիրիլէճէյինտէն՝ իմտասընա թալիպ օլանլէրին եէվմի մէղքիւրտէ տարըշուրայի ասքէրիյէ կէլմէլէրի իլան օլունուր ։

Պապը—Սէրասքէրի

1 Հազիրան 1878

Հայ լեզուի, և եկեղեցական երաժշտության դասատու մը պատրաստ է դասախօսել մայրաքաղաքիս և կամ գաւառական վարժարանաց միոյն մէջ։ Պէտք ունեցողը կհրաւիրուի առ տնօրինութիւն լրագրոյս։

ՇԻԹԲ ՄԱՆՈՒՆԲ

Ի ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆԷ

Երիարասիրեաց Հմայեակ Ծ. Վ. Դիմաքսեան

Օժանդակութեամբ

ԵԱՂՇԻՊԼԿՆԱՆ ԵՂԲԱՐՑ ՀԱՐԱՀԱՏԱՑ

Ազգային պատմական, վիճակագրական և հնագիտական տեղեկութիւններ պարունակող կարեւոր հրատարակութիւն մ'է։ Կգտնուի Հայաստանեայց Տպարանին, Եէնիգափուի և Մայր եկեղեցեաց բանկալը և Պօլսոյ Հայ գրավաճառաց քով, ի գին կէս արծաթ մէճիա։

ԽՈՐՀՈՒՐԴԲ ՀԱՆԴԻՍԻ

ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԱՍՏՈՒԾՈՅ

Ցեղ ի գրաւոր բան

Պօղոս Գ. Քէրէստէճեան

ԴՈՐԾ ԱՍԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Տպագրութիւն Արամեան

1878

Սոյն դուշնաքեայ երկասիրութիւնը՝ որ 32 երեսէ կը բաղկանայ՝ նիւթոյն աղնութեանը՝ գրաբառ սահուն ոճոյն և աղգի աղգի գողտրիկ իմաստոյն համար՝ Կաղանդի նուէր և Մրցանակաբաշխութեան համար մէկ հատիկ արժանաւոր պարգև համարուած և արդէն սպառած է։

Այս անգամ Ն. Բարձրաշնորհ Սրբազնութեան անուան պաշտպանութեամբն հովանաւորեալ, Արամեան մաքուր տպագրութեամբ և աւելի գեղեցիկ գիրքով՝ թարգմանչէն խնամով ուղղեալ և ինչ ինչ ի կարեւորաց յաւելեալ ի ըստ ընծայուի Ասիական բարենախանձ ընկերութենէն նորահաս ուսանողաց համար, այնու քաղցր ակնկալութեամբ որ անշուշտ սոյն Բ. տիպն ալ առաջնոյն բաւական պիտի արժանանայ, հայկական գրաւոր լեզուին վսեմութենը վրայ ճաշակ ունեցող նորատի ուսանողներն։

ՄԱՐԻՈՆ ՏԸ ԼՈՐՄԻ ԽՈՍՏՈՎԱՆԱՆԲԸ

ԿԱՄ

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԱՐԻՔԱՆԲ

Թարգ. Դ. Զիլինկիրեան

Սոյն գեղեցիկ վէպին հինգերորդ այն է վերջին հատորն ալ Իզմիրէն հասած ըլլալով կը ծախուի Եէնի-ճամի Զիլինկիրլէր-ճատտէսի Թիւ 2 Ս. Ղուկասեան դրատունը և ուրիշ գրավաճառաց քով։ Դին 2 ֆրանք։

ՍՈԿՐԱՏԻ ՈԳԻՆ

ՐՕՍԻ ՏԸ ՃԻԿՍԹԻՆԵԱՆԻ

Ոգեկանութեան (սբիրիթիզմ) վրայ գրուած սոյն կարեւոր գործը որ Պ. Ց. Սվաճեանէ թարգմանուած և Իզմիրի Արշալոյս Արարատեանի տպարանէն ի լոյս ընծայուած է, նոյնպէս կը ծախուի Եէնի-ճամի Զիլինկիրլէր-ճատտէսի, Թիւ 2, Ս. Ղ. և Եաղմաճեան դրատունը և ուրիշ գրավաճառաց քով։ Դին 25 սանթիմ։

Վ Ա Ճ Ա Ռ Ա Տ Ո Ւ Ն

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԹԱՐՄ ՊԱԳՍԻՄԱՏԻ

Կ. Պոլիս Ֆինճանճըլար եօղուշու Ամերիկայ խան Թիւ 27.

Ղալաթիա Նիւքսէք գալտիրիմ Թիւ 31

Ամերիկայ պագսիմատի արհեստին մէջ համբաւաւոր հանդիսացող Ց. Գ. Ճգնաւորեան կը պատրաստէ Եւրոպայի կերպով, ոսկիներ, չաքարով, իւղով և կաթով շինած ամենաընտիր պագսիմատները, նախաճաշի և թէյի հետ միասին խիստ անուշահամ ուտելիք մը և մանկանց ու հիւանդաց համար ախորժելի և անդարար ըլլալով։ Նաև Եւրոպայէն եկածներուն վերայ նախամեծար կը սեպուին իրենց թարմութեան և զնոյն ածնութեան մասին։

PILULES HOLLOWAY

ԴԵՂԱՀԱՏՔ ՀՈԼԼՕՈՒԷԻ

Լեարդի, ստամոքսի, և աղիքներու ամեն տեսակ անկարգութեանց համար խիստ ընտիր է սոյն դեղահատը, նաև ջղային տկարութեան, ուժաթափութեան և տխրութեան համար, կը ջնջէ և անհետ կընէ ամեն տեսակ անչափաւորութեանց հետքերը։ Արտի և երիկամանց վրայ օգտակար ազդեցութիւն մ'ունի. արիւնը մաքրելով նոցա խանդարեալ վիճակը կը կանոնաւորէ, և զրդռելով կենսական գործարանները կը զօրացնէ։ Իւր դեղական մեծ ազդեցութեամբը սրտախառնութիւն, կուծուութիւն, մաղձային հիւանդութիւններ, որովայնի մէջ լեցուած կղեր, գլխի ցաւեր կը վանէ - մարսողութիւնը կը չափաւորի, և մարմինը մաքրուելով բոլոր այն աղտեղութիւններէ՝ որ շատ անգամ դանդաղ հիւանդութեանց սկզբնապատճառ կըլլան, առողջ, ուժեղ, և բնական գիրքը կդարձնու։

ONGUENT HOLLOWAY

ՍԱՂԱՆԻ ՀՈԼՕՈՒԷԻ

Մարթային հիւանդութիւնք և վերք բուժելու մասին ունեցած պալսամական յատկութեանցը չհաւասարիր բնաւ ուրիշ դեղ մը. հին կամ նոր թունաւոր վերքեր, ուռեցք, քաղցկեղ (չիրիվէնչէ), սրունից և ստեանց վերքեր կամ բոլորովին կանցնին և կամ կլաւանան. օգտակար է նաև հարբուխի, հազի, սրտի բարախման, մանաւանդ օդացաւ (եէլ) ըսուած հիւանդութեան։ Իւր կաղդուրիչ և զօրաւոր ազդեցութեամբը խոյլ (սը բրամա) հիւանդութեան ասպականիչ զօրութիւնը ի՛նչ աստիճան որ ըլլայ՝ կը դիմադրաւէ։

Այս դեղերուն գործածութեան եղանակը նշանակուած է իւրաքանչիւր տուփի վրայ՝ որ կը գտնուի ամեն դեղավաճառներու քով, և մասնաւորապէս Պահէք դափու Թաշ խանի կողմերը Պ. Գասպարեանի դեղարանը՝ Նօ. 7՝ կը ծախուի։

Աւելի առնել ուզողը կը հրաւիրուի առ հեղինակն տօքթօր Հոլլօուէյ ի Լոնտոն Օքսֆօրտ փողոց Թիւ 533։

ՊԱՅՄԱՆՆԵՐ ՓՈՒՆՋԻ

1. Փունջը ՁՈՐԵՔՇԱԲԹԻ և ՇԱԲԱԹ օրերը կը հրատարակուի։

2. Տարեկան բաժանորդագինն է միայն չորս արծաթ մէճիա կանխիկ վճարելի թէ մայրաքաղաքիս և իւր արուարձանաց և թէ դաւառաց համար։

3. Վեց և երեք ամսոյ համար ալ բաժանորդ կընդունուի։

4. Տեղական ու դաւառական թղթատարութեան ծախքը խմբագրութիւնը պիտի վճարէ։

5. Հատը 2 ղուրուշ է, և կը գտնուի ամեն Հայ գրավաճառաց խանութները և ձեռքէ ծախողներու քով։

6. Ծանուցման տողը 3 ղրուշ է մէկ անգամի համար։ Աւելի ուժան կըլլայ աւելի անգամներու համար։

7. Խմբագրութեան վերաբերեալ որ և է գիր ուղղելի առ Տնօրէն-Տէր Հ. Ս. Ալաճաճեան, Կ. Պոլիս Պալըգ-Բազար Նաֆիյէ խան վերի յարկ Թիւ 16։

ՏՆՕՐԷՆ ԵՒ ՏԷՐ
Հ. Ս. ԱԼԱՃԱՃԵԱՆ

ՏՊԳՐ. ՄԻՔԱՅԷԼ Կ. ՍԱՐԳԵԱՆ
Նուսուֆեան խան վերի յարկ Թիւ 12.